



Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցի Holy Cross Armenian Church

P.O. Box 2387 Station "C", Downsview, Ontario, Canada M3N 2V8

Reverend
Houssig Nishanian
Pastor
Telephone (416) 759-6958

Toronto... 20... հուլիս... 19.80..

Գեր. Տէր
Թորգոմ Ս.Արք.Մանուկեան
Առաջնորդ
Նիւ Եօրք

Սրբազան Հայր,

Ստացուած տեղեկութեան համաձայն, Ձերդ Սրբազնութիւնը հովուական այցելութեամբ մը վերջերս Թորոնթօ եկած եւ Ս.Նորորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին հետ հանդիպում մը ունեցած է:

Եթէ Առաջնորդարանը, Ձերդ Սրբազնութեան ժամանման մասին ծխական Խորհուրդս ալ տեղեկ պահած ըլլար, այս շնորհաբեր այցելութիւնը մենք ալ վայելելու առիթը կ'ունենայինք:

Առաջնորդարանէ ստացուած 21 Յուլիս թուակիր նամակի համաձայն Թեմական Խորհուրդը՝ Թեմական Պատգամաւորական ժողովին յաջորդող Ա. նիստին որոշած էր, մօտ թուականին, Գանատական հարցի կապակցութեամբ մանրամասն տեղեկութիւններ հաղորդել:

Ձերդ Սրբազնութիւնը երբ Թորոնթօ էր, եթէ իր թանկագին ժամերէն մի քանին մեզի ալ տրամադրած ըլլար եւ Վեհափառ Հայրապետի ուղղարկուած թրղ-թածրարի մասին տեղեկութիւն տար, թէ՛ մեր 19 Յունիս 1980 թուակիր նամակի պատասխանը տրուած կ'ըլլար եւ թէ՛ շուրջ հինգ ամիս առաջ Թեմական Խորհուրդի առած որոշումը կիրարկուած - Յօդ. 80 -:

Մատչիմք Ի Համբոյր
Ձերդ Սրբազնութեան Աջին

Ի Դիմաց
Ծխական Խորհուրդի

Տօքթ. Վաչէ Քերամեթլեան
Անենադպիր

Արդէն Քիւրճեան
Ատենապետ